ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՎՁՄ-ԳՀԱՇՁԲ-03/17-3

ք.Եղեգնաձոր «21» հուլիս 2017 թ.

« ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը », ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի Կ.Սահակյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ջերմուկշին>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Կ.Ստեփանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված *ՀՀ Վայոց ձորի մարզի Աղնջաձոր համայնքի ոռոգման ջրագծի կառուցման, Եղեգիս համայնքի խմելու ջրի ջրագծի արտաքին և ներքին ցանցի հիմնանորոգման, Սայլի համայնքի խմելու ջրի ջրագծի ներքին և արտաքին ցանցի հիմնանորոգման* աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **30 սեպտեմբեր 2017թ.:**

(աշխատանքների կատարման վերջնաժամկետը)

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 23 420 796 (քսաներեք միլիոն չորս հարյուր քսան հազար յոթ հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ, որից 3 108 262 (երեք միլիոն մեկ հարյուր ութ հազար երկու հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին *<u>Աղնջաձոր համայնքի ոռոգման ջրագծի կառուցում</u>* - 11 218 800 (տասնմեկ միլիոն երկու հարյուր տասնութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ որից 1 869 800 (մեկ միլիոն ուր հարյուր վաթսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին *<u>Եղեգիս համայնքի խմելու ջրի ջրագծի արտաքին և ներքին ցանցի հիմնանորոգում</u>* – 4 776 000 (Չորս միլիոն յոթ հարյուր յոթանասունվեց հազար) ՀՀ դրամ՝ որից 796 000 (յոթ հարյուր իննսունվեց հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5-րդ չափաբաժին *<u>Սալլի համայնքի խմելու ջրի ջրագծի ներքին և արտաքին ցանցի հիմնանորոգում</u>* – 7 425 996 (յոթ միլիոն չորս հարյուր քսանհինգ հազար ինը հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ՝ որից 1 237 666 (մեկ միլիոն երկու հարյուր երեսունյոթ հազար վեց հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[1].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

[1] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ,ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[3]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ

---

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

:8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է [redacted]էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր.Շահումյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
1-րդ չափաբաժին հ/հ 900351000600
2-րդ չափաբաժին հ/հ 900351000428
5-րդ չափաբաժին հ/հ 900351000477

ՀՎՀՀ 08907717

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<< ՋերմուկՇին>>ՓԲԸ
Ք.Ջերմուկ,Շահումյան-25
ԱՇԻԲ Ջերմուկ Մ/ճ
հ/հ 247800008010999
ՀՎՀՀ 09000604

/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 21» հուլիս 20 17 թ. կնքված
« ՀՀՎՁՄ-ԳՀԱՇՁԲ-03/17-3» ծածկագրով պայմանագրի

Վայոց ձորի մարզի Աղնջաձոր համայնքի ոռոգման ջրագծի կառուցում

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ - ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չափման միավորը	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	1. Ջրատար-1				
	Հողային աշխատանքներ				
1	III կարգի գրունտի կտրում բուլդոզերով, տեղափոխելով 20մ	$մ^3$	1486,0	0,12	178,516
2	III կարգի գրունտի ետլիցք	$մ^3$	1352,0	0,05	72,186
3	Ավելացած III կարգի գրունտի հարթեցում տեղում	$մ^3$	134,0	0,05	7,155
4	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	140,0	0,96	134,548
5	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	516,0	0,55	282,390
6	Խրամուղու մշակում II կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	144,0	0,44	63,430
7	Նախապատրաստական շերտի իրականացում փափուկ գրունտներից, h=10սմ հաստությամբ	$մ^3$	73,0	1,19	86,722
8	Պաշտպանիչ շերտի իրականացում փափուկ գրունտներից	$մ^3$	230,0	1,19	273,234
9	Խրամուղու ետլիցք կողալիցքի մշակված II կարգի գրունտներից	$մ^3$	144,0	0,04	5,766
10	Խրամուղու ետլիցք կողալիցքի մշակված III կարգի գրունտներից	$մ^3$	213,0	0,05	11,372
11	Խրամուղու ետլիցք V կարգի կողալիցքի մշակված գրունտներից	$մ^3$	98,0	0,05	5,232
12	Ավելացած V կարգի գրունտի հարթեցում տեղում	$մ^3$	42,0	0,05	2,242
	Տեխնոլոգիական աշխատանքներ			0,00	0,000
1	Ապամոնտաժված ՏՇԼ-250մմ ցինկապատ խողովակների վերատեղադրում, փորձարկումով	գծմ	500,0	1,64	820,902
2	Պողպատե D=219x4մմ խողովակներ, մոնտաժումով, փորձարկումով	գծմ	540,0	12,52	6 761,029
3	ՏՇԼ-250մմ ցինկապատ խողովակների նորմալ հակակորոզիոն հիդրոմեկուսացում	գծմ	500,0	1,37	687,422
4	Պողպատե D=219x4մմ խողովակների նորմալ հակակորոզիոն հիդրոմեկուսացում	գծմ	540,0	1,12	605,465
5	Պողպատե խողովակների ձևավոր մասեր, մոնտաժումով	կգ	60,20	1,80	108,479
	Ապամոնտաժման աշխատանքներ			0,00	
	Հողային աշխատանքներ			0,00	
1	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում մեխանիզմով, կողալիցքով	$մ^3$	202,0	0,55	110,548
2	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում ձեռքով, կողալիցքով	$մ^3$	22,0	2,86	62,842

3	Խրամուղու ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից	$մ^3$	224,0	0,05	11,960
	Տեխնոլոգիական աշխատանքներ			0,00	
1	ՏՇԼ-250մմ ցինկապատ խողովակների ապամոնտաժում	գծմ	500,0	0,95	473,854
2	Ապամոնտաժված ՏՇԼ-250մմ ցինկապատ խողովակների տեղափոխում 8,0 կմ հեռավորության վրա	տ	7,310	7,30	53,373
3	Ապամոնտաժված ՏՇԼ-250մմ ցինկապատ խողովակների արտաքին մակերևույթի մաքրում	$մ^2$	392,0	0,41	162,205
	Հաղամեր 1 մասի			0,00	10 980,873
	2. Ջրթող հոր ՋԹ-1			0,00	
1	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	2,0	0,96	1,922
2	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	2,0	0,55	1,095
3	Խրամուղու ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից	$մ^3$	2,0	0,05	0,107
4	Ավելացած գրունտի հարթեցում տեղում	$մ^3$	2,0	0,05	0,107
5	Ողողատե խողովակ D=57x3,5մմ, մոնտաժումով, փորձարկումով	գծմ	4,0	2,88	11,533
6	Ողողատե D=57x3,5մմ խողովակների նորմալ հակակորոզիոն հիդրոմեկուսացում	գծմ	4,0	0,40	1,602
7	Սեպավոր փական DN50, PN=1,0ՄՊա, մոնտաժումով	հատ	1	23,89	23,893
8	Ողողատե կցաշուրթ DN50, PN=1,0 ՄՊա, մոնտաժումով	հատ	2	4,15	8,302
9	Ավազակոպճային նախաշերտի իրականացում	$մ^3$	0,30	7,88	2,363
10	Հատակի իրականացում B15 դասի բետոնով	$մ^3$	0,30	66,23	19,870
11	Պատերի իրականացում B15 դասի բետոնով	$մ^3$	0,70	60,35	42,242
12	Ծածկի իրականացում B15 դասի բետոնով	$մ^3$	0,10	76,44	7,644
13	Ամրան, տեղադրումով	տ	0,01520	442,47	6,726
14	Ներդիր տարրեր, տեղադրումով	տ	0,02442	705,59	17,230
15	Մետաղական կափարիչ, տեղադրումով	տ	0,02776	712,58	19,781
16	Մետաղական աստիճան, տեղադրումով	տ	0,00820	782,02	6,413
17	Մետաղական ծխնի, տեղադրումով	հատ	2	0,77	1,548
18	Կախովի փականք, տեղադրումով	հատ	1	2,31	2,309
19	Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ	$մ^2$	1,0	0,97	0,974
	Հաղամեր 2 մասի			0,00	175,661
	3. Ջրթող հոր ՋԹ-2			0,00	
1	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	2,0	0,96	1,922
2	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	2,0	0,55	1,095
3	Խրամուղու ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից	$մ^3$	2,0	0,05	0,107
4	Ավելացած գրունտի հարթեցում տեղում	$մ^3$	2,0	0,05	0,107
5	Ողողատե խողովակ D=57x3,5մմ, մոնտաժումով, փորձարկումով	գծմ	4,0	2,88	11,533
6	Ողողատե D=57x3,5մմ խողովակների նորմալ հակակորոզիոն հիդրոմեկուսացում	գծմ	4,0	0,40	1,602
7	Սեպավոր փական DN50, PN=1,0ՄՊա, մոնտաժումով	հատ	1	23,89	23,893
8	Ողողատե կցաշուրթ DN50, PN=1,0 ՄՊա, մոնտաժումով	հատ	2	4,15	8,302
9	Ավազակոպճային նախաշերտի իրականացում	$մ^3$	0,30	7,88	2,363
10	Հատակի իրականացում B15 դասի բետոնով	$մ^3$	0,30	66,23	19,870
11	Պատերի իրականացում B15 դասի բետոնով	$մ^3$	0,70	60,35	42,242

12	Ծածկի իրականացում B15 դասի բետոնով	$մ^3$	0,10	76,44	7,644
13	Ամրան, տեղադրումով	տ	0,01520	442,47	6,726
14	Ներդիր տարրեր, տեղադրումով	տ	0,02442	705,59	17,230
15	Մետաղական կափարիչ, տեղադրումով	տ	0,02776	712,58	19,781
16	Մետաղական աստիճան, տեղադրումով	տ	0,00820	782,02	6,413
17	Մետաղական ծխնի, տեղադրումով	հատ	2	0,77	1,548
18	Կախովի փականք, տեղադրումով	հատ	1	2,31	2,309
19	Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ	$մ^2$	1,0	0,97	0,974
	Ընդամենը 3 մասի			0,00	175,661
	4. Դպտաբկման հոր ԴՀ-1			0,00	
1	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	2,0	0,96	1,922
2	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	4,0	0,55	2,189
3	Խրամուղու ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից	$մ^3$	4,0	0,05	0,214
4	Ավելացած գրունտի հարթեցում տեղում	$մ^3$	2,0	0,05	0,107
5	Պողպատե (St) էլ. եռակցվող խողովակներ DN57x3,5մմ, մոնտաժումով, փորձարկումով	գծմ	10,0	2,88	28,832
6	Պողպատե DN57x3,5մմ խողովակների նորմալ հակակորոզիոն հիդրոմեկուսացում	գծմ	10,0	0,40	4,004
7	Սեպաձև փականDN50, PN=1,0ՄՊա, մոնտաժումով	հատ	1	23,89	23,893
8	Պողպատե կցաշուրթ DN50, PN=1.0 ՄՊա, մոնտաժումով	հատ	2	4,15	8,302
9	Ավազակոպճային նախաշերտի իրականացում	$մ^3$	0,30	7,88	2,363
10	Հատակի իրականացում B15 դասի բետոնով	$մ^3$	0,30	66,23	19,870
11	Պատերի իրականացում B15 դասի բետոնով	$մ^3$	0,70	60,35	42,242
12	Ծածկի իրականացում B15 դասի բետոնով	$մ^3$	0,10	76,44	7,644
13	Ամրան, տեղադրումով	տ	0,01520	442,47	6,726
14	Ներդիր տարրեր, տեղադրումով	տ	0,02442	705,59	17,230
15	Մետաղական կափարիչ, տեղադրումով	տ	0,02776	712,58	19,781
16	Մետաղական աստիճան, տեղադրումով	տ	0,00820	782,02	6,413
17	Մետաղական ծխնի, տեղադրումով	հատ	2	0,77	1,548
18	Կախովի փականք, տեղադրումով	հատ	1	2,31	2,309
19	Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ	$մ^2$	1,0	0,97	0,974
	Ընդամենը 4 մասի			0,00	196,564
	5. Օդահան հոր ՕՀ-1			0,00	
1	Փոսորակի մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	2,0	0,96	1,922
2	Փոսորակի մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	1,0	0,55	0,547
3	Փոսորակի ետլիցք կողալիցքով մշակված գրունտներից	$մ^3$	1,0	0,05	0,053
4	Ավելացած գրունտի հարթեցում տեղում	$մ^3$	2,0	0,05	0,107
5	Պողպատե (St) էլ. եռակցվող խողովակներ DN57x3,5մմ, մոնտաժումով, փորձարկումով	գծմ	0,30	2,88	0,865
6	Օդահան փականD N50, PN=1,0ՄՊա, մոնտաժումով	հատ	1	40,98	40,978
7	Սեպաձև փականD N50, PN=1,0ՄՊա, մոնտաժումով	հատ	1	23,89	23,893
8	Պողպատե կցաշուրթ DN50, PN=1.0 ՄՊա, մոնտաժումով	հատ	1	4,15	4,151
9	Ավազակոպճային նախաշերտի իրականացում	$մ^3$	0,30	7,88	2,363
10	Հատակի իրականացում B15 դասի բետոնով	$մ^3$	0,30	66,23	19,869
11	Պատերի իրականացում B15 դասի բետոնով	$մ^3$	1,10	58,86	64,751
12	Ծածկի իրականացում B15 դասի բետոնով	$մ^3$	0,10	88,10	8,810

13	Ամրան, տեղադրումով	տ	0,01520	442,47	6,726
14	Ներդիր տարրեր, տեղադրումով	տ	0,02442	705,59	17,230
15	Մետաղական կափարիչ, տեղադրումով	տ	0,02776	712,58	19,781
16	Մետաղական աստիճան, տեղադրումով	տ	0,00820	780,86	6,403
17	Մետաղական ծխնի, տեղադրումով	հատ	2	0,77	1,548
18	Կախովի փականք, տեղադրումով	հատ	1	2,31	2,309
19	Մետաղական տարրերի յուղաներկում 2 անգամ	$մ^2$	1,0	0,97	0,974
	Ընդամենը 5 մասի				223,282
	Ամբողջը 1 - 5 մասերի				11 748,350
	ԱԱՀ 20%				2349,670
	Ամբողջը				14 098,0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր Շահումյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900351000600
ՀՎՀՀ 08907717

----------Կ.Մահակյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<< ՋԵՐՄՈՒԿՇԻՆ>>ՓԲԸ
Ք.Ջերմուկ.Շահումյան-25
ԱՇԻՄ Ջերմուկ ՄՄ
Հ/Հ 247800008010999
ՀՎՀՀ 09000604

----------Կ.Ստեփանյան
/ստորագրություն/
Կ.Տ

• Կապալառուն աշխատանքները կատարում է Ադնջաձոր համայնքում:

Հավելված թիվ 1
« 21 » հուլիս 2017 թ. կնքված
« ՀՀԿՀՄ-ԳՀԱՇՁԲ-03/17-3» ծածկագրով պայմանագրի

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնքի խմելու ջրի ներքին եվ արտաքին ցանցի հիմնանորոգման

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չափման միավորը	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	1. Ջրատար Ջ				
	Հողային աշխատանքներ				
1	VII կարգի գրունտի փխրեցում	$մ^3$	52,50	8,41	441,724
2	Խրամուղու մշակում փխրեցված VII կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	52,50	1,20	63,201
3	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	63,0	1,02	64,424
4	Խրամուղու մշակում II կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	21,0	0,47	9,786
5	Նախապատրաստական շերտի իրականացում բերովի փափուկ գրունտներից (տեղափոխել 1,0կմ հեռավորությունից), h=10սմ հաստությամբ	$մ^3$	10,50	3,61	37,920
6	Պաշտպանիչ շերտի իրականացում բերովի փափուկ գրունտներից (տեղափոխել 1,0կմ հեռավորությունից)	$մ^3$	25,0	3,61	90,286
7	Խրամուղու ետլիցք II կարգի կողալիցքի մշակված գրունտներից՝ տոփանումով	$մ^3$	21,0	0,04	0,815
8	Խրամուղու ետլիցք V կարգի կողալիցքի մշակված գրունտներից՝ տոփանումով	$մ^3$	63,0	0,05	3,262
9	Խրամուղու ետլիցք բերովի փափուկ գրունտներից (տեղափոխել 1,0կմ հեռավորությունից)	$մ^3$	16,0	2,60	41,629
10	Ավելացած գրունտի հայթնցում տեղում	$մ^3$	52,50	0,05	2,718
	Տեխնոլոգիական աշխատանքներ			0,00	0,000
1	Պողպատե էլեռակցվող խողովակներ DN108x3,5մմ, մոնտաժումով, փորձարկումով	գծմ	150,0	5,16	774,716
2	Պողպատե DN108x3,5մմ խողովակների նորմալ հակակորոզիոն հիդրոմեկուսացում	գծմ	150,0	0,56	83,491
3	Պողպատե DN100 խողովակի միացում Ø100(St) խողովակին	տեղ	2	6,83	13,669
4	Պողպատե (St) DN108 խողովակների լվացում, ախտահանում	կմ	0,150	96,69	14,504
	Ընդամենը 1 մասի				**1 642,146**
	2. Ջրագիծ Ջ-1				
	Հողային աշխատանքներ				
1	VII կարգի գրունտի փխրեցում	$մ^3$	125,50	8,41	1 055,931
2	Խրամուղու մշակում փխրեցված VII կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	125,50	1,20	151,079
3	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	56,50	1,02	57,777
4	Խրամուղու մշակում II կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	17,0	0,47	7,922

5	Նախապատրաստական շերտի իրականացում բերովի փափուկ գրունտներից (տեղափոխել 1,0կմ հեռավորությունից), h=10սմ հաստությամբ	$մ^3$	15,0	3,61	54,172
6	Պաշտպանիչ շերտի իրականացում բերովի փափուկ գրունտներից (տեղափոխել 1,0կմ հեռավորությունից)	$մ^3$	30,0	3,61	108,344
7	Խրամուղու եզրերը՝ կարգի կողալիցքի մշակված գրունտներից՝ տրամանումով	$մ^3$	17,0	0,04	0,660
8	Խրամուղու եզրերը՝ V կարգի կողալիցքի մշակված գրունտներից՝ տրամանումով	$մ^3$	56,50	0,05	2,925
9	Խրամուղու եզրերը բերովի փափուկ գրունտներից (տեղափոխել 1,0կմ հեռավորությունից)	$մ^3$	80,0	2,60	208,144
10	Ավելացած գրունտի բարձում ա/մ և տեղափոխում 1.0կմ հեռավորության վրա	$մ^3$	125,50	4,49	563,705
	Տեխնոլոգիական աշխատանքներ			0,00	0,000
1	Պողպատե էլեռակցվող խողովակներ DN57x3,5մմ, մոնտաժումով, փորձարկումով	գծմ	255,0	2,80	712,972
2	Պողպատե DN57x3,5մմ խողովակների նորմալ հակակորոզիոն հիդրոմեկուսացում	գծմ	255,0	0,39	99,024
3	Պողպատե խողովակների ձևավոր մասեր	կգ	3,0620	1,72	5,272
4	Պողպատե DN57 խողովակի միացում Ø57(St) խողովակին	տեղ	2	3,69	7,378
5	Պողպատե (St) DN57 խողովակների փորձարկում, լվացում, ախտահանում	կմ	0,2550	85,30	21,752
	Ընդամենը 2 մասի				3 057,058
	Ամբողջը 1- 2 մասերի				4 699,204
	ԱԱՀ 20%				939,841
	Ամբողջը				5 639,0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր.Շահումյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
հ/հ 900351000428
ՎՀՀ 08907717
Վ.Կանակյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<< ՋերմուկՇին>>ՓԲԸ
Ք.Ջերմուկ,Շահումյան-25
ԱՇԻԲ Ջերմուկ Մ/ճ
հ/հ 247800008010999
ՎՀՀ 09000604
Հ.Ստեփանյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Կապալառուն աշխատանքները կատարում է Եղեգիս համայնքում:

Հավելված թիվ 1
« 21 » հուլիս 2017 թ. կնքված
« ՀՀԿՀՄ-ԳՀԱՇՁԲ-03/17-3» ծածկագրով պայմանագրի

ՀՀ Վայոց Ձորի մարզի Սալլի համայնքի խմելու ջրի ներքին եվ արտաքին ցանցի հիմնանորոգման

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չափման միավորը	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	1. Ջրատար Ջ (1-ին հատված)				
	Հողային աշխատանքներ				
1	VII կարգի գրունտի փխրեցում	մ^3	68,0	8,41	572,135
2	Խրամուղու մշակում փխրեցված VII կարգի գրունտներում, կողալիցքով	մ^3	68,0	1,20	81,859
3	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով	մ^3	86,0	1,02	87,943
4	Խրամուղու մշակում II կարգի գրունտներում, կողալիցքով	մ^3	28,0	0,47	13,048
5	Նախապատրաստական շերտի իրականացում բերովի փափուկ գրունտներից (տեղափոխել 1,0կմ հեռավորությունից), h=10սմ հաստությամբ	մ^3	14,0	3,61	50,560
6	Պաշտպանիչ շերտի իրականացում բերովի փափուկ գրունտներից (տեղափոխել 1,0կմ հեռավորությունից)	մ^3	33,0	3,61	119,178
7	Խրամուղու ետլիցք II կարգի կողալիցքի մշակված գրունտներից	մ^3	28,0	0,04	1,087
8	Խրամուղու ետլիցք V կարգի կողալիցքի մշակված գրունտներից	մ^3	86,0	0,05	4,453
9	Խրամուղու ետլիցք բերովի փափուկ գրունտներից (տեղափոխել 1,0կմ հեռավորությունից)	մ^3	19,0	2,60	49,434
10	Ավելացած գրունտի հարթեցում տեղում	մ^3	68,0	0,05	3,521
	Տեխնոլոգիական աշխատանքներ			0,00	0,000
1	Ողողատե էլ.եռակցվող խողովակներ DN108x3,5մմ, մոնտաժումով, փորձարկումով	գծմ	200,0	5,16	1 032,950
2	Ողողատե DN108x3,5մմ խողովակների նորմալ հակակոռոզիոն հիդրոմեկուսացում	գծմ	200,0	0,56	111,320
3	Ողողատե DN100 խողովակի միացում Ø100(St) խողովակին	տեղ	2	6,83	13,669
4	Ողողատե (St) DN108 խողովակների լվացում, ախտահանում	կմ	0,20	96,69	19,339
	Ընդամենը 1 մասի				2 160,496
	2. Ջրատար Ջ (2-րդ հատված)				
	Հողային աշխատանքներ				
1	VII կարգի գրունտի փխրեցում	մ^3	49,0	8,41	412,274
2	Խրամուղու մշակում փխրեցված VII կարգի գրունտներում, կողալիցքով	մ^3	49,0	1,20	58,987
3	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով	մ^3	101,0	1,02	103,282

4	Խրամուղու մշակում II կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	27,50	0,47	12,815
5	Նախապատրաստական շերտի իրականացում բերովի փափուկ գրունտներից (տեղափոխել 1,0կմ հեռավորությունից), h=10սմ հաստությամբ	$մ^3$	13,50	3,61	48,754
6	Պաշտպանիչ շերտի իրականացում բերովի փափուկ գրունտներից (տեղափոխել 1,0կմ հեռավորությունից)	$մ^3$	32,0	3,61	115,566
7	Խրամուղու ետլիցք II կարգի կողալիցքի մշակված գրունտներից	$մ^3$	27,50	0,04	1,068
8	Խրամուղու ետլիցք V կարգի կողալիցքի մշակված գրունտներից	$մ^3$	101,0	0,05	5,229
9	Խրամուղու ետլիցք բերովի փափուկ գրունտներից (տեղափոխել 1,0կմ հեռավորությունից)	$մ^3$	2,0	2,60	5,204
10	Ավելացած գրունտի հարթեցում տեղում	$մ^3$	49,0	0,05	2,537
	Տեխնոլոգիական աշխատանքներ			0,00	0,000
1	Պողպատե էլեռակցվող խողովակներ DN108x3,5մմ, մոնտաժումով, փորձարկումով	գծմ	195,0	5,16	1 007,126
2	Պողպատե DN108x3,5մմ խողովակների նորմալ հակակորոզիոն հիդրոմեկուսացում	գծմ	195,0	0,56	108,537
3	Պողպատե DN100 խողովակի միացում Ø100(St) խողովակին	տեղ	2	6,83	13,669
4	Պողպատե (St) DN108 խողովակների լվացում, ախտահանում	կմ	0,1950	96,69	18,855
	Ընդամենը 2 մասի				1 913,903
	3. Ջրագիծ Ջ-1				
	Հողային աշխատանքներ				
1	VII կարգի գրունտի փխրեցում	$մ^3$	91,50	8,41	769,858
2	Խրամուղու մշակում փխրեցված VII կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	91,50	1,20	110,149
3	Խրամուղու մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	274,50	1,02	280,702
4	Խրամուղու մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	48,0	0,58	27,960
5	Խրամուղու մշակում II կարգի գրունտներում, կողալիցքով	$մ^3$	18,0	0,47	8,388
6	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ	$մ^3$	33,0	5,53	182,397
7	Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում	$մ^3$	77,0	4,03	309,975
8	Խրամուղու ետլիցք II կարգի կողալիցքի մշակված գրունտներից՝ տոփանումով	$մ^3$	18,0	0,31	5,592
9	Խրամուղու ետլիցք III կարգի կողալիցքի մշակված գրունտներից՝ տոփանումով	$մ^3$	48,0	0,32	15,533
10	Խրամուղու ետլիցք V կարգի կողալիցքի մշակված գրունտներից՝ տոփանումով	$մ^3$	253,0	0,38	94,972
11	Ավելացած VII կարգի գրունտի բարձում ա/մ և տեղափոխում 1,0կմ հեռավորության վրա	$մ^3$	91,50	4,49	410,986
12	Ավելացած V կարգի գրունտի բարձում ա/մ և տեղափոխում 1,0կմ հեռավորության վրա	$մ^3$	21,50	3,59	77,089
	Տեխնոլոգիական աշխատանքներ			0,00	
1	Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակներ de90, PN=1,0 ՍՊա, մոնտաժումով, փորձարկումով	գծմ	475,0	2,92	1 385,628

5	Պոլիէթիլենե անկյունակ de90, α=90°, մոնտաժումով	հատ	2	4,84	9,682
6	Պոլիէթիլենե ելքատակ de90, մոնտաժումով	հատ	1	5,11	5,113
7	Պոլիէթիլենե միջադիր de90, մոնտաժումով	հատ	1	4,06	4,064
8	Պողպատե ելքաշուրթ DN80, PN=1.6ՄՊա, մոնտաժումով	հատ	2	7,46	14,912
9	Պոլիէթիլենե (PE) de90 խողովակների լվացում, ախտահանում	կմ	0,4750	96,69	45,929
	Ընդամենը 3 մասի				3,758,930
	Ամբողջը 1 - 3 մասերի				7 833,329
	ԱԱՀ 20%				1566,666
	Ամբողջը				9 400,0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Կայծակաձորի մարզպետարան
ք.Նոր-Եկեղնաձոր,Շահումյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական-վարչություն
Հ/Հ 90035100047 7
Կոդ 08907717
Կ.Սահակյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<< ՋերմուկՇին>>ՓԲԸ
Ք.Ջերմուկ,Շահումյան-25
ԱՇԻՐ Ջերմուկ Մ/Ճ
Հ/Հ 247800008010999
Կոդ 09000604
Ա.Ստեփանյան
/ստորագրություն/
Կ.Տ

* Կապալառուն աշխատանքները կատարում է Մայի համայնքում:

Հավելված թիվ 2
« 21 » հուլիս 20 17թ. կնքված
« ՀՀԿՀՄ-ԳՀԱՇՁԲ-03/17-3» *ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

<< ԱՂՆՋԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԱԳԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ >> **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	**Ջրատար-1**	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
1.1	*Հողային աշխատանքներ*	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
1.2	*Տեխնոլոգիական աշխատանքներ*	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
	Ապամոնտաժման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
1.3	*Հողային աշխատանքներ*	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
1.4	*Տեխնոլոգիական աշխատանքներ*	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
2	**Ջրթող հոր ՋԹ-1**	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
3	**Ջրթող հոր ՋԹ-2**	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
4	**Դատարկման հոր ԴՀ-1**	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
5	**Օդահան հոր ՕՀ-1**	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր.Շահումյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
և Հ/Հ 900351000600
ՀՎՀՀ 08907717

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<< ՋերմուկՇին>>ՓԲԸ
Ք.Ջերմուկ,Շահումյան-25
ԱՇԻԲ Ջերմուկ Մ/ճ
Հ/Հ 247800008010999
ՀՎՀՀ 09000604

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 21 » հուլիս 20 17 թ. կնքված
« ՀՀԿՀՄ-ԳՀԱՇՀԲ-03/17-3» *ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

<< ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ, >> **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1.	Ջրատար Ջ		
1.1	*Հողային աշխատանքներ*	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
1.2	Տեխնոլոգիական աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
2.	Ջրագիծ Ջ-1		
2.1	*Հողային աշխատանքներ*	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
2.2	Տեխնոլոգիական աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր.Շահումյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900351000428
ՀՎՀՀ 08907717

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<< ՋերմուկՇին>>ՓԲԸ
Ք.Ջերմուկ,Շահումյան-25
ԱՇԻԲ Ջերմուկ Մ/ճ
Հ/Հ 247800008010999
ՀՎՀՀ 09000604

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 21 » հուլիս 2017թ. կնքված
« ՀՀՎՀՄ-ԳՀԱՇՁԲ-03/17-3» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

<< ՍԱԼԼԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ>> **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	**Ջրատար Ջ (1-ին հատված)**		
1.1	*Հողային աշխատանքներ*	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
1.2	*Տեխնոլոգիական աշխատանքներ*	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
2	**Ջրատար Ջ (2-րդ հատված)**		
2.1	*Հողային աշխատանքներ*	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
2.2	*Տեխնոլոգիական աշխատանքներ*	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
3	**Ջրագիծ Ջ-1**		
3.1	*Հողային աշխատանքներ*	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
3.2	*Տեխնոլոգիական աշխատանքներ*	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրը	30.09.2017թ
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր.Շահումյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900351000477
ՀՎՀՀ 08907717

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<< ՋերմուկՇին>>ՓԲԸ
Ք.Ջերմուկ,Շահումյան-25
ԱՇԻԲ Ջերմուկ Մ/ճ
Հ/Հ 247800008010999
ՀՎՀՀ 09000604

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 21 » հունիս 2017թ. կնքված
***« ՀՀԿՀՄ-ԳՀԱՇՁԲ-03/17-3»** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142/12	Աղնջաձոր համայնքի ոռոգման ջրագծի կառուցում	0	0	0	0	0	0	11218800	11218800	11218800	11218800	11218800	11218800	11218800
2	45611300/25	Եղեգիս համայնքի խմելու ջրի ջրագծի արտաքին և ներքին ցանցի հիմնանորոգում	0	0	0	0	0	0	4776000	4776000	4776000	4776000	4776000	4776000	4776000
5	45611300/32	Սալի համայնքի խմելու ջրի ջրագծի ներքին և արտաքին ցանցի հիմնանորոգում	0	0	0	0	0	0	7425996	7425996	7425996	7425996	7425996	7425996	7425996

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան
ք.Եղեգնաձոր.Շահումյան 5
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
1-րդ չափաբաժին Հ/Հ 900351000600
2-րդ չափաբաժին Հ/Հ 900351000428
5-րդ չափաբաժին Հ/Հ 900351000477
ՀՎՀՀ 08907717

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<< ՋերմուկՇին>>ՓԲԸ
Ք.Ջերմուկ,Շահումյան-25
ԱՇԻԲ Ջերմուկ Մ/6
Հ/Հ 247800008010999
ՀՎՀՀ 09000604

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 4
« 21 » հունիս 20 17 թ. կնքված
« ՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-03/17-3» *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« 21 » հունիս 20 17թ. կնքված
« ՀՀԿՀՄ-ԳՀԱՇՀԲ-03/17-3» *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն